

**ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ  
ԶՆՆՈՒԹՅԱՆ**

**ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔ և  
ՀԱՐԱԿԻՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

**ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**

**2012**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>3</b>
<b>1.1 Աշխատանքի շրջանակները</b> .....	<b>3</b>
<b>1.2 Ջրամատակարարման ու ջրահեռացման գործող համակարգի համառոտ         նկարագրությունը</b> .....	<b>4</b>
1.2.1 Ջրամատակարարման արտաքին համակարգ.....	4
1.2.2 Ջրամատակարարման բաշխիչ ցանց.....	5
1.2.3 Ջրահեռացման համակարգ .....	6
<b>1.3 Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիման</b> .....	<b>6</b>
<b>1.4 Շրջակա միջավայրի նախնական զննություն</b> .....	<b>7</b>
<b>1.5 Շրջակա միջավայրի վրա ազդեցություն</b> .....	<b>8</b>

## Հապավումների ցանկ

ՋԻՆՁ ՍՊԸ	ՋԻՆՁ Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀայՋԿ ՓԲԸ	“Հայջրմուղկոյուղի” Փակ Բաժնետիրական Ընկերություն
ԵրՋԿ ՓԲԸ	“Երևան Ջուր” Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ԱԶԲ	Ասիական Ջարգացման Բանկ
ՕԿՁ	Օրվա կարգավորման ջրամբար
ՋնՁ	Ջրամատակարարում և Ջրահեռացում
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր
ՇՆնԿ	Շինարարական Նորմեր և Կանոններ
Junc	Հանգույց
ԿՄԿ	Կոյուղու մաքրման կայան

## ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

### 1.1 Աշխատանքի շրջանակները

Այս ծրագրի նպատակն է բարելավել Մասիս քաղաքի և Այնթապ, Արբաթ, Հայանիստ, Ազատաշեն, Դաշտավան, Դարբնիկ և Մարամարաշեն գյուղերի խմելու ջրամատակարարումը:

Այս նպատակին հասնելու համար նախնական նախագծով նախատեսվում է իրականացնել աշխատանքներ՝ երկու ուղղություններով.

- ջրամատակարարման արտաքին համակարգի բարելավում,
- բնակավայրերի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում:

Արտաքին համակարգի բարելավման աշխատանքներն ընդգրկում են.

- ինքնաբուխ արտեզյան 4 հորերի սանիտարական գոտիների բարեկարգում, տնակների վերանորոգում, տեխնոլոգիական տարրերի փոխարինում և ծախսաչափերի տեղադրում,
- Մասիսի նոր պոմպակայանի շենքի պահեստային մասի վերանորոգում և տարածքի բարեկարգում,
- Խարբերդի ՕԿՁ-ների սանիտարական գոտու վերակառուցում, ՕԿՁ-ների ծածկերի, ՊՕՖ-երի և մտոցների փոխարինում, ջրամբարների թմբապատում, ինչպես նաև չոր խցի վերանորոգում՝ տեխնոլոգիական տարրերի փոխարինմամբ և ջրաչափական հանգույցի կառուցում,
- Մասիս քաղաքը սնող ջրատարի վթարային մոտ 2.5կմ երկարությամբ հատվածի փոխարինում,
- Խարբերդի ՕԿՁ-ներից դեպի Այնթապ գյուղ նոր մոտ 1.4կմ երկարությամբ ջրատարի կառուցում,
- մոտ 0.9կմ երկարությամբ նոր ջրատարի կառուցում՝ Հայանիստ գյուղի մուտքագիծը Դարբնիկ գյուղի բնակակեղի տարածքից դուրս բերելու համար,
- մոտ 0.94կմ երկարությամբ նոր մուտքագծի կառուցում՝ Խաչվար գյուղը սնող ջրատարը ջերմոցների և սեփականաշնորհված տարածքներից դուրս բերելու նպատակով:

Բնակավայրերի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման աշխատանքներն ընդգրկում են.

- Բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում,
- բաժանորդների ջրաչափական հանգույցների և անհատական տների մուտքագծերի կառուցում,
- հրշեջ հիդրանտների կառուցում,
- թաղված տեղադրման փականային հանգույցների կառուցում,
- ջրամատակարարման հորերի կառուցում:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ապահովել վերը նշված բնակավայրերի ջրամատակարարումը խմելու որակի ջրով և բարելավել ջրի բաշխման ու հաշվառման համակարգերը:

## 1.2 Ջրամատակարարման ու ջրահեռացման գործող համակարգի համառոտ նկարագրությունը

### 1.2.1 Ջրամատակարարման արտաքին համակարգ

Մասիս քաղաքի և գյուղական 7 համայնքների ջրամատակարարումն իրականացվում է Արարատյան I, II հերթերի պոմպակայանի տարածքում կառուցված նոր պոմպակայանից, որն էլ իր հերթին ջուր է ստանում մոտ 6.0կմ հեռավորության վրա գտնվող ինքնաբուխ արտեզյան 4 հորերից /ընդհանուր ելքը մոտ 500լ/վ/:

Արտեզյան հորերից ջուրը հավաքող ջրատարի միջոցով ինքնահոս եղանակով տրվում նոր պոմպակայանի հարևանությամբ կառուցված ջրամբար, որտեղ էլ իրականացվում է քլորացումը:

Գործող արտեզյան 4 հորերն էլ գտնվում են անմխիթար վիճակում են, շենքերը գտնվում է վթարային վիճակում, բոլոր փականները փոխարինման անհրաժեշտություն ունեն, բացակայում են սանիտարական գոտիները գտնվում են ոչ պատշաճ վիճակում:



Նկար 1. Արտեզյան հորերի սանիտարական պահպանության գոտին

Մասիսի I, II հերթերի պոմպակայանը նորակառույց է, պոմպերը՝ նոր: Պոմպակայանից դուրս եկող ջրատարներից յուրաքանչյուրի վրա տեղադրված են էլեկտրամագնիսական ծախսաչափեր: Միայն պոմպակայանի տարածքը կարիք ունի բարեկարգման:

Խարբերդի երկու ՕԿՁ-ները տեղադրված են 915.0մ նիշի վրա, Խարբերդ գյուղից վերև: ՕԿՁ-ների տարածքը զբաղեցնում է մոտ 1.5 հա, այն ցանկապատված է և գտնվում է նորմալ վիճակում:

ՕԿՁ-ների կառույցների ընդհանուր վիճակը կարելի է համարել բավարար, միայն ծածկը, մտոցները և ՊՕՖ-երը ենթակա են փոխարինման:

ՕԿՁ-ները թմբապատված են մասնակի, պատերի բաց հատվածներից մի քանիսում բետոնը քայքայված է և ամրանները ենթարկված են կոռոզիայի, ՕԿՁ-ների վրա բուսահողի շերտը կազմում է 15-20սմ /տես նկ. 9/:

ՕԿՁ-ները սնող խողովակը նորմալ վիճակում է:

ՕԿՁ-ների չոր խուցը գտնվում է նորմալ վիճակում, սակայն բոլոր փականներն ու խողովակները փոխարինման անհրաժեշտություն ունեն: Բաժանարար հանգույցը նույնպես վերանորոգման կարիք ունի:

Նորաբացի ՕԿՁ-ն նորակառույց է, որի տարածքում գտնվում է նաև նոր պոմպակայան՝ 3 պոմպային ագրեգատներով:

Մասիս քաղաքը ներկայումս գրեթե ամբողջությամբ ջուր է ստանում Խարբերդի ՕԿՁ-ներից՝ բացառությամբ կայարան թաղամասի, որի ջրամատակարարումն իրականացվում է Մասիսի նորակառույց պոմպակայանից դեպի Նորաբացի ՕԿՁ տրվող ճնշումային գծից:

Խարբերդի ՕԿՁ-ներից Մասիս քաղաքը սնող ջրատարի սկզբնական մասը վերանորոգված է, իսկ մոտ 2.5կմ հատվածը գտնվում է վթարային վիճակում /տես նկ 13/:

Այնթապ գյուղի ջրամատակարարումն իրականացվում է Մասիսի պոմպակայանից դեպի Նորաբացի ՕԿՁ-ներ տրվող ճնշումային ջրատարից (մոտ 15լ/վ), Խարբերդի ՕԿՁ-ներից և “Երևան Ջուր” ՓԲԸ-ին պատկանող ջրատարից:

Արբաթ և Ագատաշեն գյուղերի ջրամատակարարումն իրականացվում է Նորաբացի ՕԿՁ-ների ճնշումային ջրատարից:

Հայանիստ, Դաշտավան և Դարբնիկ գյուղերի ջրամատակարարումն իրականացվում է Նորաբացի ՕԿՁ-ների ինքնահոս ջրատարից:

Մարմարաշեն գյուղի ջրամատակարարումն իրականացվում է Խարբերդի ՕԿՁ-ներից:

## 1.2.2 Ջրամատակարարման բաշխիչ ցանց

Մասիս քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցը մոտ 25կմ իրականացված է 50-200մմ մետաղական և պոլիէթիլենե խողովակներով, որից շուրջ 11.0կմ-ը արդեն փոխարինվել է նորով: Ցանցի չվերանորոգված մասը գտնվում է վատթար վիճակում և հնարավոր չէ ապահովել բավարար ճնշումներ: Ցանցի քայքայված լինելու հիմնական պատճառն այն է, որ այն իրականացված է մետաղական խողովակներից: Եվ քանի որ Մասիս քաղաքի ամբողջ տարածքում գրունտային ջրերի մակարդակը բարձր է, ապա նրանց ագրեսիվ ազդեցությունը նպաստում է մետաղական խողովակների ժամանակից շուտ քայքայմանը:

Գյուղական բնակավայրերի բաշխիչ ցանցը հիմնականում իրականացված է թուջե, պողպատե և պոլիէթիլենե խողովակներով: Չնայած Այնթապ, Արբաթ, Դաշտավան և Մարմարաշեն գյուղերում՝ ՀՀ ՋնՁ համակարգերի բարելավում՝ ծրագրի շրջանակներում վերակառուցվել և կառուցվել է բաշխիչ ցանցի որոշ ջրագծեր, փոխարինվել են անհատական տների մուտքագծեր, այնուամենայնիվ դեռ կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն:

Հայանիստ, Ագատաշեն և Դարբնիկ գյուղերում բաշխիչ ցանցի ջրագծերը գտնվում են վատ վիճակում, ինչը հաճախակի վթարների և հոսակորուստների պատճառ է հանդիսանում:

Արբաթ գյուղի բաշխիչ ցանցը իրականացված է պողպատե և պոլիէթիլենե խողովակներից: Արբաթ գյուղում իրականացված ծրագրի արդյունքում բաշխիչ ցանցի վիճակը բարելավվել է, բայց դեռ կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն:

### **1.2.3 Ջրահեռացման համակարգ**

Մասիս քաղաքի գործող ջրահեռացման ցանցը մոտ 34կմ է, որը իրականացված է 150-800մմ մետաղական, թուջե, բետոնե և ասբեստե խողովակներից: Ջրահեռացման ցանցը գտնվում է անմխիթար վիճակում:

Գյուղական բնակավայրերը կոյուղացված չեն և բնակչությունն օգտվում է բակային զուգարաններից:

## **1.3 Բնակավայրերի աշխարհագրական դիրքը և կլիման**

Մասիս քաղաքը և Այնթապ, Արբաթ, Հայանիստ, Ագատաշեն, Դաշտավան, Դարբնիկ, Մարմարաշեն գյուղերը գտնվում են Արարատի մարզի հյուսիս-արևմտյան հատվածում: Մասիս քաղաքը Երևանից գտնվում է 20կմ, իսկ գյուղերը Մասիս քաղաքից՝ 5-15կմ հեռավորության վրա:

Մասիս քաղաքը և Այնթապ, Արբաթ, Հայանիստ, Ագատաշեն, Դաշտավան, Դարբնիկ, Մարմարաշեն գյուղերը տեղաբաշխված են 828.0-895.0մ նիշերի սահմաններում: Մասիսի քաղաքապետարանից և գյուղերի գյուղապետարաններից ստացված տվյալների համաձայն բնակչության ընդհանուր թիվը կազմում է մոտ 45978 բնակիչ:

Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, չոր, խիստ ցամաքային կլիմա:

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 40°C:

Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -30°C:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 306մմ, գերակշռում են 3.0մ/վրկ արագություն, հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղության քամիները: 20 տարվա ընթացքում հնարավոր են 28մ/վրկ ուժգնության քամիներ: Ջյան ծածկույթի հաստությունը հասնում է 450սմ, ճնշումը՝ 70կգոմ/մ<sup>2</sup>:

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70սմ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, Արաքս և Վեդի գետերի կողմը:

Տարածքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, այդ հողատարածքները հիմնականում ոռոգվում են, այդ պատճառով կառուցված է ոռոգման համակարգի խիտ ցանց, ինչպես խողովակաշարով, այնպես էլ խոշոր ջրատարներով:

Ըստ ֆունդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղագնման, նրա երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ շերտերը՝

- Հողա-բուսական ծածկույթ կավավազային և ավազակավային կազմի, հազվադեպ ճալաքարի և կոպճի պարունակությամբ, (մինչև 10%), երբեմն ծառերի և թփերի արմատներով տարածված է չկառուցապատված տեղամասերում, հզորությունը՝ 0.3-0.5մ:
- Կավավազ կանաչա-մոխրագույն, պինդ և պլաստիկ թանձրության, տեղ-տեղ տղմային, երբեմն ճալաքարի և կոպճի պարունակությամբ, տարահատիկ ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-4.0մ:
- Ավազակավ շագանակագույն, գորշավուն, տեղ-տեղ կանաչավուն, պինդ և կիսապինդ, առանձին դեպքերում ձիգ պլաստիկ, երբեմն հասուն պլաստիկ թանձրության, տղմացած, սակավախոնավ և ջրհագեցած, տարածումը համատարած է, հզորությունը՝ 2.0-5.0մ:
- Ավազային գրունտներ, տարահատիկ, խայտաբղետ երանգներով, կավային նյութի խառնույթով մինչև 20%, կավային և կոպճային գրունտների ենթաշերտերով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, տեղ-տեղ փուխր, ջրհագեցած, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-1.5մ:
- Ճալաքար-կոպճային գրունտ, հազվադեպ գլաքարերով, հրաբխային ապարներից, լավ հղկվածության, ավազային, տեղ-տեղ կավային լցանյութով մինչև 30%, ավազի և կավային գրունտների ենթաշերտերով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, լցանյութը ջրխոնավ և ջրհագեցած:

Տարածաշրջանը ունի ինժեներա-երկրաբանական բարենպաստ և պայմանական բարենպաստ պայմաններ, առանձին տեղամասեր ունեն անբարենպաստ ինժեներա-երկրաբանական պայմաններ, շինարարական իրացման տեսակետից պիտանելիության առումով:

## **1.4 Շրջակա միջավայրի նախնական գննություն**

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է լճա-կուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Ընդհանուր առմամբ տարածքի մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք՝ Արաքս և Վեդի գետերի կողմը:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը ջրառատ է: Առկա են ինչպես վերնաջրերի, այնպես էլ խորը տեղադրում ունեցող ճնշումային ջրերի հորիզոններ: Ստորգետնյա ջրերն (I հորիզոնի) ունեն տեղական թույլ ճնշում, մակարդակի տատանումները հասնում է 0.5-1.5մ: Գրունտային ջրերի բարձր մակարդակի պատճառով

տարածաշրջանի առանձին տեղամասերը ճահճացած են և ջրավորված: Գրունտային ջրերի մակարդակն իջեցնելու նպատակով տարածաշրջանում ստեղծվել է “բաց” տեսակի ցամաքուրդային համակարգ՝ ջրանցքների և խողովակաշարերի միջոցով:

Համաձայն ՀՀ Ե ԻԻ-6. 02-2006, շրջանը տեղադրված է III (երրորդ) սեյսմիկ գոտու մեջ: Գրունտներն ըստ սեյսմիկ հատկանիշների պատկանում են II, III և IV կարգերին:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները “ներկայացված են” ջրածածկմամբ և ջրհեղեղմամբ, գրունտային ջրերի բարձր մակարդակով, IV կարգի (ըստ սեյսմիկ հատկանիշների) գրունտների առկայությամբ (տղմային և տղմացած, ջրհագեցած գրունտներ):

Արարատի մարզի տարածքում գերակշռում են հումուսից աղքատ գորշ հողերը, աղուտ-ալկալի, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները:

Լանդշաֆտը կիսաանապատային է կան անապատային տեղամասեր: Տիրապետում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածված կենդանիներն են կինճը, եղեգնակատուն, ջրասամույրը: Շատ են սողունները, միջատները:

Մարզի տարածքը գտնվում է Երևանի և Գեղամայի ֆլորիստիկ շրջաններում: Երևանի ֆլորիստիկ շրջանում ներառված են Հայաստանի ֆլորայի 140 հազվագյուտ և անհետացող և 36 էնդեմիկ տեսակներ, Գեղամայի՝ 24 հազվագյուտ և անհետացող և 20 էնդեմիկ տեսակներ: Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածքում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները՝ թելուկազգիներ (*Ghenopodiaceae*), (*Alhagi pseudoalhagi*), վարդատերեփուկ (*Amberboa iljiniana*), կարմրան ութառեչանի (*Tamarix octandra*):

Ծրագրի իրականացման տարածքում չկան հատուկ պահպանվող և էկոլոգիական տեսակետից կարևոր տարածքներ, արժեքավոր տեսակների գոտիներ: Մասիս քաղաքը և ծրագրում ընդգրկված գյուղերը չունեն նաև մշակութային, հնագիտական կամ պատմամշակութային տարածքներ:

## 1.5 Շրջակա միջավայրի վրա ազդեցություն

Մասիս քաղաքի և տարածաշրջանի գյուղական 7 բնակավայրերի բնակչության ջրապահանջն ապահովելու նպատակով սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման արտաքին համակարգի և բնակավայրերի բաշխիչ ցանցի վերակառուցում:

Բնակավայրերի բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման ժամանակ բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն լինի: Հիմնական բացասական ազդեցությունները կարտահայտվեն օդի և հողի աղտոտմամբ, բնակչությանը հասցված անհանգստությամբ (աղմուկ, փոշի, ճանապարհների անանցելիություն, ցեխ և այլն): Սրանք բոլորը կկրեն ժամանակավոր բնույթ:



Ջրամատակարարման արտաքին համակարգի բարելավման աշխատանքները ընդգրկում են արտեզյան 4 հորերի վերակառուցում և սանիտարարկան գոտիների ապահովում, տարածքի բարեկարգում, Մասիսի I, II հերթերի նոր պոմպակայանի տարածքի բարեկարգում, ջրատարների վթարված հատվածների փոխարինում և նոր ջրատարների կառուցում, ՕԿՁ-ների վորանորոգում և սանիտարարկան գոտու բարելավում:

Արտեզյան հորերի, Մասիսի պոմպակայանի և ՕԿՁ-ների բարելավման ու վերակառուցման աշխատանքները հիմնականում իրականացվելու են այդ օբյեկտների սանիտարարկան պահպանության գոտիների ներսում և շրջակա միջավայրի աղտոտումը կկրի ավելի սահմանափակ բնույթ: Սակայն արտեզյան հորերից երկուսը գտնվում են Հրազդան գետին բավականին մոտիկ տարածքում և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձվի Հրազդան գետի աղտոտումը կանխելու վրա:

Ջրատարների վերակառուցման ու նոր ջրատարների կառուցման ժամանակ հնարավոր է շրջակա միջավայրի, հողային և ջրային ռեսուրսների, օդի աղտոտում, որոշ տարածքներում նաև արոտավայրերի, այգիների ու այլ մշակովի հողահանդակների փոքր հատվածների խախտում:

Հայանիստ գյուղի համար նախատեսվող նոր ջրատարը պետք է թռիչքային անցում ունենա Հրազդան գետի վրայով, ինչը ռիսկեր է առաջացնում ինչպես Հրազդան գետի աղտոտման, այնպես էլ նրա ափերի պաշտպանության համար:



*Նկար 2. Հայանիստ գյուղի նոր կառուցվող ջրատարի թռիչքային հատվածի հնարավոր տեղը Հրազդան գետի վրա*

Այսպիսով, բնապահպանական նախնական գննությունները (ԲՆՁ) բացահայտել է, որ Մասիսի քաղաքի և գյուղական 7 բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների իրականացման տարածքում ջրային, հողային ռեսուրսների, լանդշաֆտների, բուսական ու կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցություն չի ակնկալվում: Բոլոր ազդեցությունները լինելու են ժամանակավոր և վերանալու են շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո:

Բնապահպանական նախնական զննության արդյունքում այս ծրագիրը կարելի է դասել Բ կատեգորիայի՝ ըստ ՀԲ-ի 4.01 Բնապահպանական գործառնական քաղաքականության փաստաթղթի (տես հավելված 4):

Շրջակա միջավայրի մանրամասն զննությունը նախատեսվում է իրականացնել աշխատանքային նախագծի ընթացքում, երբ կհաստատվեն բոլոր այն կառույցների տեղադրությունները, որոնք նախատեսվում են կառուցել, վերակառուցել կամ նորոգել: